

ՍՈՒՐԵՆ ԱՂԱՐԱՔՅԱՆ—Հայ սովետական գրականության պատմություն (2 հատորով), հ. 1 (20—30-ական թթ.), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, 576 էջ:

Աշխատության մեջ քննության է առնվել XX դարի 20—30-ական թվականների ղեղադրական նոր իդեալ և բովանդակություն փնտրող գրականությունը, որի հոգևոր առանցքն էր սոցիալիստական գաղափարախոսությունը, աշխարհի ու մարդու ներդաշնակության գեղարվեստական խոր հիմնավորումը, աշխարհում կատարվող իրադարձությունները պատմական հեռանկարի մեջ գնահատելու հայացքը և դիրքը:

Գրքում ներկայացված է տվյալ ժամանակաշրջանի գրական շարժումը, որը հեղափոխության ազդեցությամբ ստացավ նոր թափ, ազգային և սոցիալական վերածնության ուղղություն, 20—30-ական թվականների գրականության մեջ մանրամասն վերլուծվել են գեղարվեստական բարձր ու վեհ սկզբունքները. հայոց բանաստեղծության նոր դիմագծի հայտնագործությունը, «հոգեբանականացման» խնդիրը, վերածնված հայրենիքի խանգավառ ընկալումները:

Հատորն ունի նաև գեղարվեստական արձակի, թատերգության, քննադատության և գրականագիտության բաժիններ, որոնց մեջ հանգամանորեն ներկայացվել է Ե. Չարենցի, Գ. Դեմիրճյանի, Ստ. Զորյանի, Ա. Բակունցի, Գ. Մահարու գրական-հասարակական բեղմնավոր գործունեությունը: Գիրքը հասցեագրված է ընթերցող լայն շրջաններին:

Գրքի պատասխանատու խմբագիրն է Վ. Մ. Մնացականյանը:

ԼԱՎՐԵՆՏԻ ԱՆԱՆՅԱՆ—Սոցիալիստական մրցությունը և արտադրության արդյունավետության բարձրացումը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, 145 էջ:

Աշխատության մեջ բացահայտվում է սոցիալիստական մրցության գերը աշխատանքի արտադրողականության բարձրացման, արտադրական պոտենցիալի արդյունավետ օգտագործման, խնայողության ռեժիմի ուժեղացման, արտադրանքի որակի բարելավման բնագավառներում: Գիրքը բաղկացած է ներածությունից, չորս գլխից և ծանոթագրություններից: Հեղինակը դիտարկել է սոցիալիստական մրցության կազմակերպման առանձնահատկությունները. մրցությունը որպես արտադրական հարաբերություն և աշխատանքի արտադրողականության աճի խթանման կարևոր գործոն, մրցությունը և խնայողության ռեժիմի ուժեղացումն ու արտադրանքի որակի բարելավումը: Աշխատությունը հասցեագրված է ընթերցող լայն շրջաններին:

Գրքի պատասխանատու խմբագիրն է տնտեսագիտության դոկտոր Մ. Ա. Գրիգորյանը:

ԶԱՎԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ—Հայ պատմավեպի պոետիկան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, 358 էջ:

Մենագրությունը նվիրված է անցյալի և սովետական շրջանի հայ պատմավեպերի ուսումնասիրությանը: Այն բաղկացած է առաջաբանից և երկու մասից: Առաջին մասում հեղինակը ներկայացրել է Մերենցի, Րաֆֆու, Մուրացանի պատմավեպերի գեղարվեստական հղացումները, ժանրի ու պոետիկայի յուրահատկությունները, իսկ զրբի երկրորդ մասում՝ Դեմիրճյանի և Զորյանի պատմավեպերի ստեղծման, պատումի և լեզվաոճի յուրահատկությունները, երկերի բյուրեղացման միջոցներն ու ուղիները, որոնք հնարավորություն են տալիս ավելի ճիշտ ընկալել ու մեկնաբանել պատմական անցյալը: Գրքում տրված են նորագույն գրականագիտության մեթոդաբանության նվաճումները. ռիթմը, ժամանակը, տարածությունը, հոգեբանական շփոթը պատմավեպի պոետիկայում: Մենագրությունն ունի գրականության ցանկ, մամուլի բաժին և հեղինակային արխիվներ: Գիրքը հասցեագրված է գրականագետներին և ընթերցող լայն շրջաններին:

Մենագրության պատասխանատու խմբագիրն է բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Ն. Սարինյանը:

«Ռանքեր Մատենադարանի» № 15—ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, 358 էջ:
Գիրքն ունի 11 հոդված, 3 հրապարակում, մատենագիտության բաժին և տեղեկատու:

Հոդվածներում խոսվում է Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի գործունեության 25-ամյա արդյունքների, Անանիա Շիրակացու «Քրոնիկոնի», հայկական ութ-ձայնի գանձարանային հատվածի, հայ մեկնաբանական գրականության, «Գրիգոր Լուսավորչի վարդապետության» ասորական աղբյուրների, Մովսես Կաղանկավազու «Աղվանից պատմության» ձեռագրերի, Գրիգոր Խլաթեցու ձեռագրական ժառանգության, Ուկրաինայի հայերի միջնադարյան կնիքների, XVII դարի Հնդկաստանի պետական գործիչ, արձակագիր, բանաստեղծ Բարահմանի՝ Մատենադարանում գտնվող նամականու, Թորոս Ռոսլինի արվեստում պատկերված «Մենդյան» թեմայի մասին, իսկ «Ջգուշացեք, կեղծիք է» հոդվածում՝ աղվանական ալբոսների մի «գլուխ» մասին:

Հրապարակումների բաժնում հաղորդվում են կան Հովհան Ոսկերեքների սաղմոսաց մեկնությունից ի հայտ բերված նորահայտ նշխարների, Սոփիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան դիվանական վավերագրերի, XVI դարի մատենագիր Հովսեփ Սեբաստացու բժշկագիտական երկի, Լոնդոնի Վելքոմ ինստիտուտի գրադարանի հայերեն ձեռագրերի մասին:

Տեղեկատու բաժնում նշվում է Մատենադարանի ձեռագրերի աճի, գիտական նիստերի և հրատարակությունների մասին:

Գրքի պատասխանատու քարտուղարն է Լ. Տեր-Պետրոսյանը:

ՀերոՌԴՈՏՈՍ—Պատմություն ինը քրից, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, 651 էջ:

Հին Հունաստանի պատմագրության հիմնադիր Հերոդոտոսի երկը բովանդակում է հին աշխարհի պատմությունը՝ մինչև մ. թ. ա. V դարը: Երկում մանրամասն նկարագրվում են նաև հույն-պարսկական պատերազմները: Այն դիցաբանական, ազգագրական, աշխարհագրական նյութերի հարուստ աղբյուր է: Ունի մեկնության բաժին, որտեղ տրվում են Հերոդոտոսի կենսագրական տեղեկությունները: Հերոդոտոսը որպես պատմական գիտությունների հիմնադիր, նրա կապը Հելլադայի խոշորագույն քաղաքական և մշակութային կենտրոն Աթենքի հետ, աշխարհայացքը և քաղաքական կողմնորոշումը, բազմաթիվ և հեռավոր ճամփորդությունները: Մեկնության մեջ տրվում են պատմագրության սկզբնավորումը, «Պատմության» աղբյուրները, բովանդակությունը և ձևը, նկարագրվում են նաև «Պատմության» տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին: Մեկնության բաժինը ընթերցողին է ներկայացրել գրքի պատասխանատու խմբագիր: ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Սարգսյանը:

Գիրքն ունի նաև ծանոթագրություններ և ցանկեր: Հասցեագրվում է ընթերցող լայն շրջաններին:

Եղիա Մուշեղյան—Թուրքերեն-հայերեն բառարան (աշխատասիրությամբ Բ. Լ. Զուգասզյանի), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, 177 էջ:

Թուրքերեն-հայերեն հայատառ բառարանն ունի շուրջ 2000 բառ, որը կազմել է վաճառական ու բանահավաք Եղիա Մուշեղյանը 1720—1721 թվականներին: Գիրքն ունի առաջարան, որտեղ խոսվում է Եղիա Մուշեղյանի կենսագրության և Եղիայից մեզ հասած արտակարգ հարուստ ու հետաքրքիր, իր տեսակի մեջ եզակի արխիվի մասին (հարյուրավոր նամակներ, գրական գործեր, բանահյուսական հարուստ նյութեր, տաղարան, բժշկական նյութեր): Թուրքերեն-հայերեն բառարանը հայ լեզվաբանական գրականության ուշադրության արժանի էջերից է և 112 նոր բառերով հարստացնում է հայերեն բառապաշարը: Գրքի «Բառաքանական դիտողություններ» բաժնում XVIII դարի խոսակցական հայերենի ուսումնասիրությանը նպաստելու, ինչպես նաև բառարանն օգտագործողներին մատչելի ու հասկանալի դարձնելու նպատակով աշխատասիրողը բացատրել ու ստուգաբանել է հայերեն անծանոթ, բարբառային և փոխառյալ բառերը: Գիրքը նախատեսված է հայագետների ու թուրքագետների համար:

Թուրքերեն-հայերեն բառարանի պատասխանատու խմբագիրն է Մ. Հ. Մուրադյանը: